Տ. ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ
(ավագանի անունը՝ Սերժ)

Ծնվել է 1950 թ. Երևանում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1966 թ., ընդունվել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտելուց հետո երկար տարիներ ֆիզիկա և մաթեմատիկա է դասավանդել միջնակարգ դպրոցներում:

1976 թ. սկսած աշխատել է Երևանի հաշվողական կենտրոններից մեկում՝ որպես ինժեներ-ծրագրավորող:

1988 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Գրքի արևելահայերեն առաջին հրատարակությունը տպագրության պատրաստելու հանձնաժողովում:

2000 թ. աշխատում է Մայր Աթոռի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հրատարակչական բաժնում:

Դասավանդում է «Կրոնի պատմություն» և «Ժամանակակից աղանդներ» առարկաներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Դպրանոցում:

Մի շարք կրոնագիտական գրքերի հեղինակ է, որոնցից կարելի է առանձնացնել «Ժամանակակից աղանդները Հայաստանում»՝ նվիրված Հայաստանում առկա կրոնական արդիական ուղղություններին:

2001 թ. հունվարի 14-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի: